

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Մաքսային միության հանձնաժողովի

2011 թվականի հոկտեմբերի

18-ի թիվ 826 որոշմամբ



**ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ**

---

**ՄՄ ՏԿ 013/2011**

**Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար  
նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված  
վառելիքին եւ մագուրթին ներկայացվող պահանջների մասին**

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան..... 4

Հոդված 1. Կիրառման ոլորտը ..... 4

Հոդված 2. Սահմանումներ ..... 5

Հոդված 3. Շուկայում վառելիքի շրջանառությանը ներկայացվող պահանջները..... 7

Հոդված 4. Անվտանգության պահանջները ..... 8

Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովում ..... 10

Հոդված 6. Համապատասխանության հաստատում .....11

Հոդված 7. Վերապահում..... 14

Հավելված 1

Ավտոմոբիլային բենզինի եւ դիզելային վառելիքի մակնիշի նշագիրը..... 17

Հավելված 2

Ավտոմոբիլային բենզինի բնութագրերին ներկայացվող պահանջները .....19

Հավելված 3

Դիզելային վառելիքի բնութագրերին ներկայացվող պահանջները..... 21

Հավելված 4

Մագուրի բնութագրերին ներկայացվող պահանջները..... 23

Հավելված 5

Ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի բնութագրերին ներկայացվող պահանջները.....24

Հավելված 6

Ավիացիոն բենզինի բնութագրերին ներկայացվող պահանջները .....27

Հավելված 7

Նավերի համար նախատեսված վառելիքի բնութագրերին ներկայացվող պահանջները..... 29

Հավելված 8

Վառելիքի համապատասխանության հայտարարագրման սխեմաները..... 30

## **Նախաբան**

1. Մաքսային միության սույն տեխնիկական կանոնակարգը, (այսուհետ՝ ՄՄ տեխնիկական կանոնակարգ) մշակված է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Սույն ՄՄ տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ դրվող ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուլթին (այսուհետ՝ վառելիք) ներկայացվող՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում կիրառման եւ կատարման համար պարտադիր պահանջների սահմանման նպատակով:

### **Հոդված 1. Կիրառման ոլորտը**

1.1. ՄՄ տեխնիկական կանոնակարգը տարածվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք շրջանառության մեջ դրվող եւ շրջանառության մեջ գտնվող վառելիքի վրա:

1.2. ՄՄ տեխնիկական կանոնակարգով պահանջներ են սահմանվում վառելիքի նկատմամբ՝ մարդու կյանքի եւ առողջության, գույքի պաշտպանության ապահովման, շրջակա միջավայրի պահպանության, դրա նշանակության, անվտանգության եւ էներգետիկ արդյունավետության վերաբերյալ սպառողին մոլորության մեջ գցող գործողությունների կանխարգելման նպատակով:

1.3. ՄՄ տեխնիկական կանոնակարգը չի տարածվում պաշտպանական պետական պատվերով մատակարարվող, պետական նյութական պահուստի պահպանվածությունն ապահովող կազմակերպություններում, ինչպես նաեւ նավթահանքերում եւ հորատման հարթակներում սեփական օգտագործման

կարիքների համար պահվող վառելիքի, Մաքսային միության միասնական մաքսային տարածքի սահմաններից դուրս արտահանման վրա:

## Հոդված 2. Սահմանումներ

2.1. ՄՄ տեխնիկական կանոնակարգում գործածվում են հետևյալ եզրույթներն ու դրանց սահմանումները.

ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզին՝ հեղուկ վառելիք՝ կայծային բռնկումով ներքին այրման շարժիչներում օգտագործման համար,

շրջանառության մեջ թողարկում՝ վկայագրավորված վառելիքի առաջնային անցումը պատրաստողից դեպի սպառողը,

դիզելային վառելիք՝ հեղուկ վառելիք՝ սեղմումից բոցավառվող ներքին այրման շարժիչներում օգտագործման համար,

պատրաստող՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, այդ թվում՝ օտարերկրյա, որն իր անունից կամ հանձնարարությամբ իրականացնում է վառելիքի արտադրություն եւ (կամ) իրացում, պատասխանատու է դրա՝ ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության համար,

ներմուծող՝ ՄՄ անդամ պետության ռեզիդենտ, որը ՄՄ պետության ոչ ռեզիդենտի հետ կնքում է արտաքին առևտրային համաձայնագիր՝ վառելիքի փոխանցման վերաբերյալ, եւ իրականացնում է այդ վառելիքի պահպանությունն ու իրացումը (մեծածախ եւ (կամ) մանրածախ առևտուր) եւ պատասխանատվություն է կրում դրա՝ ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության համար,

մազութ՝ նավթի թորմասս հանդիսացող վառելիք, որը եռում է 360°C-ից բարձր ջերմաստիճանի (760մմ սնդիկի սյան ճնշման) պայմաններում, ստացվում է նավթի վերամշակումից կամ դրա վերամշակման երկրորդային գործընթացների արդյունքում,

վառելիքի մակնիշ՝ վառելիքի բառային եւ (կամ) տառային, թվային նշագիրը, որն ավտոմոբիլային բենզինի եւ դիզելային վառելիքի դեպքում ներառում է դրա էկոլոգիական դասը,

շուկայում վառելիքի շրջանառություն՝ պատրաստողից դեպի սպառող վառելիքի շարժի փուլերը, որոնք ներառում են բոլոր ընթացաշրջանները, որոնց միջով անցնում է վկայագրավորված վառելիքը շրջանառության դուրս բերելուց հետո,

օկտանային թիվ՝ բենզինի ճայթյունակայունությունը բնութագրող ցուցանիշ՝ արտահայտված էտալոնային սանդղակի միավորներով,

փորձարդյունաբերական խմբաքանակ՝ արտադրանքի խմբաքանակ, որը նոր մշակված աշխատանքային փաստաթղթերով արտադրվել է տրված տեխնիկական պահանջներին համապատասխանությունը փորձարկումների միջոցով ստուգելու համար՝ արտադրության դնելու եւ (կամ) նպատակային օգտագործման հնարավորության մասին որոշում կայացնելու նպատակով ,

վառելիքի խմբաքանակ՝ մեկ մակնիշի վառելիքի քանակ, որն ուղեկցվում է որակի մասին փաստաթղթով (անձնագրով),

սպառող՝ սեփական կարիքների համար վկայագրավորված վառելիքի ձեռքբերման նպատակ ունեցող կամ այն ձեռք բերող իրավաբանական կամ ֆիզիկական անձ,

հավելանյութ՝ նյութ, որն ավելացվում է վառելիքի մեջ՝ դրա գործառնական հատկությունները բարելավելու նպատակով,

վաճառող՝ ՄՄ անդամ պետության ռեզիդենտ հանդիսացող իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն իրականացնում է վկայագրավորված վառելիքի մեծածախ եւ (կամ) մանրածախ իրացում սպառողին՝ ՄՄ անդամ պետության ազգային օրենսդրությանը համապատասխան, եւ պատասխանատու է շուկայում ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող վառելիքի տեղաբաշխման համար,

նավերի համար նախատեսված վառելիք՝ հեղուկ վառելիք, որն օգտագործվում է նավերի ուժային էներգետիկ կայանքներում,

վառելիք՝ ռեակտիվ շարժիչների համար՝ հեղուկ վառելիք՝ ռեակտիվ ավիացիոն շարժիչներում օգտագործման համար,

պատրաստողի կողմից լիազորված անձ՝ սահմանված կարգով ՄՄ անդամ պետության կողմից գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը, նրա հետ կնքված պայմանագրի հիման վրա, պատրաստողի կողմից որոշվել է համապատասխանության հաստատման դեպքում իր անունից գործողությունների իրականացման եւ վառելիքը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում տեղաբաշխման համար, ինչպես նաեւ վառելիքի՝ ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանելու դեպքում պատասխանատվության սահմանման համար,

ցետանային թիվ՝ դիզելային վառելիքի բոցավառելիությունը բնութագրող ցուցանանիշ՝ արտահայտված էտալրնային սանդղակի միավորներով,

վառելիքի էկոլոգիական դաս՝ վառելիքի անվտանգության պահանջները սահմանող դասակարգման կոդ (K2, K3, K4, K5):

### **Հոդված 3. Շուկայում վառելիքի շրջանառությանը ներկայացվող պահանջներ**

3.1. Թույլատրվում է այն վառելիքի շրջանառության մեջ թողարկումը եւ շրջանառությունը, որի համապատասխանությունը պահանջներին հաստատված է ՄՄ տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի պահանջների համաձայն:

3.2. Ավտոմոբիլային բենզինի եւ դիզելային վառելիքի իրացման ժամանակ վաճառողը պարտավոր է սպառողին տեղեկություններ տրամադրել՝

վառելիքի անվանման եւ մակնիշի մասին,

վառելիքի՝ ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանության մասին:

Ավտոմոբիլային բենզինի եւ դիզելային վառելիքի մանրաձախ իրացման ժամանակ վառելիքի անվանման եւ մակնիշի, այդ թվում՝ էկոլոգիական դասի վերաբերյալ տեղեկությունները պետք է տեղադրված լինեն սպառողի համար

հասանելի վայրերում, վառելիքի բաշխիչ սարքավորումների վրա, ինչպես նաև արտացոլվեն դրամարկղային կտրոններում:

Սպառողի պահանջով վաճառողը պարտավոր է ներկայացնել վառելիքի որակի մասին փաստաթուղթը (անձնագիրը):

3.3. Ավտոմոբիլային բենզինի եւ դիզելային վառելիքի մակնիշի նշագրին ներկայացվող պահանջները բերված են 1-ին հավելվածում:

#### **Հոդված 4. Անվտանգության պահանջներ**

4.1. Ավտոմոբիլային բենզինը պետք է համապատասխանի ՄՄ տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածում նշված պահանջներին:

4.2. Չի թույլատրվում ավտոմոբիլային բենզինի մեջ մետաղ պարունակող (մանգան, կապար եւ երկաթ պարունակող) հավելանյութերի օգտագործումը:

Բելառուսի Հանրապետության տարածքում արգելվում է արոմատիկ ամինների (մոնոմեթիլանիլինների) օգտագործումը:

4.3. Ավտոմոբիլային բենզինը կարող է պարունակել ներկանյութեր (բացի կանաչ եւ կապույտ գույներից) եւ նշանյութեր:

4.4. Դիզելային վառելիքը պետք է համապատասխանի ՄՄ տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածում նշված պահանջներին:

4.5. Մինչեւ 2014 թվականի հունվարի 1-ը Ղազախստանի Հանրապետությունում ՄՄ տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածով նախատեսված պահանջներին համապատասխանող դիզելային վառելիքի շրջանառության մեջ թողարկման (շրջանառության) հետ մեկտեղ թույլատրվում է գյուղատնտեսական եւ արտաճանապարհային տեխնիկայի համար օգտագործվող դիզելային վառելիքի թողարկումը շրջանառության մեջ՝ 45-ից ոչ պակաս ցետանային թվով եւ 2000 մգ/կգ-ից ոչ ավելի ծծմբի զանգվածային մասով եւ առանց «յուղման ունակություն» եւ «պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մաս» ցուցանիշների նորմավորման՝ ՄՄ տեխնիկական



կանոնակարգի 3-րդ հավելվածով նախատեսված պահանջների հետ մնացած չափանիշների համապատասխանության պայմանով:

Տվյալ վառելիքը չի թույլատրվում իրացնել ընդհանուր օգտագործման ավտոլցավորման կայանների միջոցով:

4.6. Դիզելային վառելիքում չի թույլատրվում մետաղ պարունակող հավելանյութերի օգտագործումը՝ բացառությամբ հակաստատիկ հավելանյութերի:

4.7. Մազութը պետք է համապատասխանի ՄՄ տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածով սահմանված պահանջներին:

4.8. Ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքը պետք է համապատասխանի ՄՄ տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածով սահմանված պահանջներին:

4.9. Ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքը չպետք է դրա հատկությունները վատացնող քանակությամբ մակերետութասկտիվ եւ այլ քիմիական նյութեր պարունակի:

4.10. Ավիացիոն բենզինը պետք է համապատասխանի ՄՄ տեխնիկական կանոնակարգի 6-րդ հավելվածով սահմանված պահանջներին:

4.11. 99.5-ից ոչ պակաս օկտանային թվով եւ 130-ից ոչ պակաս տեսակայնությամբ ավիացիոն բենզինը կարող է պարունակել երկնագույն գունանյութ:

4.12. Նավերի համար նախատեսված վառելիքը պետք է համապատասխանի ՄՄ տեխնիկական կանոնակարգի 7-րդ հավելվածով սահմանված պահանջներին:

4.13. Շրջանառության մեջ դրվող եւ (կամ) շրջանառության մեջ գտնվող վառելիքի յուրաքանչյուր խմբաքանակ պետք է ուղեկցվի որակի մասին փաստաթղթով (անձնագրով):

Անձնագիրը պետք է պարունակի՝

վառելիքի անվանումը եւ մակնիշի նշագիրը,

պատրաստողի (պատրաստողի կողմից լիազորված անձի) կամ ներմուծողի կամ վաճառողի անվանումը, նրանց գտնվելու վայրը (նշելով պետությունը),

տվյալ մակնիշի վառելիքի նկատմամբ պահանջներ սահմանող փաստաթղթի նշագիրը (առկայության դեպքում),

փորձարկումների նորմատիվային արժեքները եւ փաստացի արդյունքները, որոնցով հաստատվում է տվյալ մակնիշի վառելիքի համապատասխանությունը ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին,

անձնագրի տրման ամսաթիվը եւ համարը,

անձնագիրը ձեւակերպող անձի ստորագրությունը,

տեղեկություններ՝ համապատասխանության հայտարարագրի վերաբերյալ,

տեղեկություններ՝ վառելիքում հավելանյութերի առկայության մասին:

4.14. Շրջանառության մեջ դրվող վառելիքի խմբաքանակին կից ուղեկցվող փաստաթղթերը կազմվում են ռուսերենով եւ ՄՄ այն անդամ պետության պետական լեզվով, որի տարածքում տվյալ խմբաքանակը գտնվելու է շրջանառության մեջ:

## **Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովում**

5.1. Վառելիքի անվտանգությունն ապահովվում է սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների պահպանմամբ:

5.2. ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջները կատարելու եւ արտադրանքի համապատասխանության գնահատում (հաստատում) իրականացնելու համար անհրաժեշտ հետազոտությունների (փորձարկումների), այդ թվում՝ նմուշառման կանոնները եւ մեթոդները սահմանվում են միջպետական ստանդարտներում, իսկ դրանց բացակայության դեպքում (մինչեւ միջպետական ստանդարտների ընդունումը)՝ Մաքսային միության անդամ պետությունների ազգային (պետական) ստանդարտներում:

## Հոդված 6. Համապատասխանության հաստատում

6.1. Վառելիքը շրջանառության մեջ դնելուց առաջ համապատասխանության հայտարարագրման ձեռով իրականացվում է ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքի համապատասխանության հաստատում:

Վառելիքի համապատասխանության հաստատման գործընթացը անցկացնում է հայտատուն:

Վառելիքի համապատասխանության հայտարարագրման ժամանակ հայտատու կարող է լինել ՄՄ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան իր տարածքում գրանցված այն իրավաբանական անձը կամ ֆիզիկական անձը, որը կամ պատրաստող է, կամ պատրաստողի կողմից լիազորված ներկայացուցիչ, կամ ներմուծող:

Վառելիքի համապատասխանության հաստատումն իրականացվում է վառելիքի համապատասխանության հայտարարագրման սխեմաներով, որոնք սահմանված են սույն հոդվածով եւ ներկայացված են ՄՄ տեխնիկական կանոնակարգի 8-րդ հավելվածում:

ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջների հետ վառելիքի համապատասխանությունը հաստատելու նպատակով փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) պետք է հավատարմագրված լինի եւ ընդգրկված լինի Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների միասնական ռեեստրում:

Համապատասխանության հաստատման նպատակով փորձաարդյունաբերական խմբաքանակի վառելիքի փորձարկումները թույլատրվում է անցկացնել փորձարկման լաբորատորիայում:

ՄՄ տեխնիկական կանոնակարգին վառելիքի համապատասխանության հայտարարագիրը հայտատուն ընդունում է Մաքսային միության հանձնաժողովի որոշմամբ հաստատված միասնական ձեռով:

6.2. ՄՄ տեխնիկական կանոնակարգին վառելիքի համապատասխանության հաստատումն իրականացվում է՝

սերիական թողարկման վառելիքների համար՝ 3դ կամ 6դ սխեմաներով, խմբաքանակներով արտադրվող կամ ներմուծվող վառելիքների համար՝ 4դ սխեմայով,

փորձարդյունաբերական խմբաքանակների համար՝ 2դ սխեմայով՝ ավտոմոբիլային բենզինի, դիզելային վառելիքի, նավերի համար նախատեսված վառելիքի եւ մազութի համար, 4դ սխեմայով՝ ավիացիոն բենզինի եւ ռեակտիվ շարժիչների վառելիքի համար:

6.2.1. Սերիական թողարկման վառելիքի համար հայտատուն համապատասխանության հայտարարագրի գրանցման համար ձեւավորում եւ ներկայացնում է ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի փաթեթ, որի կազմը ներառում է՝

- վառելիքի փորձարկումների արձանագրությունը (արձանագրությունները),
- այն փաստաթղթի պատճենը, որով պահանջներ են սահմանվում արտադրված վառելիքի նկատմամբ (առկայության դեպքում),
- որակի կառավարման համակարգի հավաստագրի պատճենը (առկայության դեպքում եւ 6դ սխեմայով հայտարարագրման դեպքում),
- ՄՄ տեխնիկական կանոնակարգին վառելիքի համապատասխանության հայտարարագիրը:

6.2.2. Խմբաքանակներով թողարկվող կամ ներմուծվող վառելիքի համար հայտատուն համապատասխանության հայտարարագրի գրանցման համար ձեւավորում եւ ներկայացնում է ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի փաթեթ, որի կազմը ներառում է՝

- վառելիքի փորձարկումների արձանագրությունը (արձանագրությունները),

- այն փաստաթղթերի պատճենը, որով պահանջներ են սահմանվում արտադրված վառելիքի նկատմամբ ( առկայության դեպքում),

- վառելիքի ներմուծված յուրաքանչյուր խմբաքանակի որակը նույնականացնող եւ հաստատող փաստաթղթերը (անձնագիրը),

- որակի կառավարման համակարգի հավաստագրի պատճենը (առկայության դեպքում),

- ՄՄ տեխնիկական կանոնակարգին վառելիքի համապատասխանության հայտարարագիրը:

6.2.3. Փորձարդյունաբերական խմբաքանակների համար հայտատուն համապատասխանության հայտարարագրի գրանցման համար ձեւավորում եւ ներկայացնում է ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքի համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի փաթեթ, որի կազմը ներառում է՝

- վառելիքի փորձարկումների արձանագրությունը (արձանագրությունները),

- վառելիքի փորձարդյունաբերական խմբաքանակի որակը նույնականացնող եւ հաստատող փաստաթղթերը (անձնագիրը),

- որակի կառավարման համակարգի հավաստագրի կրկնօրինակը (առկայության դեպքում),

- ՄՄ տեխնիկական կանոնակարգին վառելիքի համապատասխանության հայտարարագիրը:

6.3. Համապատասխանության հայտարարագիրը ծանուցողական սկզբունքով ենթակա է գրանցման Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրի տվյալների էլեկտրոնային բազայում: Համապատասխանության հայտարարագրի գործողության ժամկետը սկսվում է դրա գրանցման ամսաթվից:

Վառելիքի համապատասխանության հայտարարագիրը գրանցվում է՝

3 տարուց ոչ ավելի ժամկետով՝ 3դ սխեմայով համապատասխանության հաստատման դեպքում,

հաշվի առնելով տվյալ վառելիքի պահպանման ժամկետը, սակայն 3 տարուց ոչ ավելի ժամկետով՝ 4դ եւ 2դ սխեմաներով համապատասխանության հաստատման դեպքում,

5 տարուց ոչ ավելի ժամկետով՝ 6դ սխեմայով համապատասխանության հաստատման դեպքում:

#### Հոդված 7. Վերապահում

7.1. ՄՄ անդամ պետությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող վառելիքի՝ ՄՄ անդամ պետության տարածքում շրջանառության մեջ թողարկումը սահմանափակելու, արգելելու, ինչպես նաեւ այն վառելիքի շուկայից հանելու համար:

Ընդունված որոշման մասին տեղեկացվում են ՄՄ մյուս անդամ պետությունները:

7.2. ՄՄ տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 3 տարվա ընթացքում, թույլատրվում է մինչեւ ՄՄ տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը շրջանառության մեջ թողարկված վառելիքի շրջանառությունը:

7.3. Էկոլոգիական K2 դասի ավտոմոբիլային բենզինի՝ շրջանառության մեջ թողարկումը եւ շրջանառությունը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում չի թույլատրվում: Ղազախստանի Հանրապետության տարածքում նշված արգելքը գործում է 2014 թվականի հունվարի 1-ից:

Մանգանի, երկաթի մոնոմեթիլանիլինների պարունակության որոշումը Ղազախստանի Հանրապետության համար սկսվում է իրականացվել 2014

թվականի հունվարի 1-ից ոչ ուշ:

Էկոլոգիական K3 դասի ավտոմոբիլային բեռնափոխակի՝ շրջանառության մեջ թողարկումը եւ շրջանառությունը թույլատրվում է՝

Բելառուսի Հանրապետության տարածքում՝ մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը,

Ղազախստանի Հանրապետության տարածքում՝ մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը,

Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը:

Էկոլոգիական K4 դասի ավտոմոբիլային բեռնափոխակի՝ շրջանառություն մեջ թողարկումը եւ շրջանառությունը թույլատրվում է՝

Բելառուսի Հանրապետության տարածքում՝ մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը,

Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

Էկոլոգիական K4 եւ K5 դասի ավտոմոբիլային բեռնափոխակի՝ շրջանառության մեջ թողարկմանը եւ շրջանառությանն անցնելը Ղազախստանի Հանրապետության տարածքում իրականացվում է 2016 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ:

Էկոլոգիական K5 դասի ավտոմոբիլային բեռնափոխակի՝ շրջանառության մեջ թողարկումը եւ շրջանառությունը սահմանափակված չէ:

7.4. Էկոլոգիական K2 դասի դիզելային վառելիքի՝ շրջանառության մեջ թողարկումը եւ շրջանառությունը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում չի թույլատրվում: Ղազախստանի Հանրապետությունում նշված արգելքը գործում է 2014 թվականի հունվարի 1-ից:

Էկոլոգիական K3 դասի դիզելային վառելիքի՝ շրջանառության մեջ

թողարկումը եւ շրջանառությունը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում չի թույլատրվում: Նշված արգելքը գործում է՝

Ղազախստանի Հանրապետության տարածքում՝ 2016 թվականի հունվարի 1-ից,

Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ 2015 թվականի հունվարի 1-ից:

Էկոլոգիական K4 դասի դիզելային վառելիքի՝ շրջանառության մեջ թողարկումը եւ շրջանառությունը թույլատրվում է՝

Բելառուսի Հանրապետության տարածքում՝ մինչեւ 2014 թվականի դեկտեմբերի 31-ը,

Ռուսաստանի Դաշնության տարածքում՝ մինչեւ 2015 թվականի դեկտեմբերի 31-ը:

Էկոլոգիական K4 եւ K5 դասի դիզելային վառելիքի՝ շրջանառության մեջ թողարկմանը եւ շրջանառությանն անցնելը Ղազախստանի Հանրապետության տարածքում իրականացվում է 2016 թվականի հունվարի 1-ից ոչ ուշ:

Էկոլոգիական K5 դասի դիզելային վառելիքի՝ շրջանառության մեջ թողարկումը եւ շրջանառությունը սահմանափակված չէ:



Հավելված 1

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

**Ավտոմոբիլային բենզինի եւ դիզելային վառելիքի մակնիշի նշագիրը**

1. Ավտոմոբիլային բենզինի նշագիրը ներառում է որոշակի հաջորդականությամբ դասավորված՝ գծիկով միացված նշանների հետեւյալ խմբերը՝

1.1. Առաջին խումբ. ԱԻ (AI) տառերը, որոնք նշանակում են ավտոմոբիլային բենզին,

1.2. Երկրորդ խումբ. ավտոմոբիլային բենզինի՝ հետազոտական մեթոդով որոշված օկտանային թվի թվային նշագիրը (80, 92, 93, 95, 96, 98 եւ այլն),

1.3. Երրորդ խումբ. ավտոմոբիլային բենզինի էկոլոգիական դասը նշող K2, K3, K4, K5 պայմանանշանները:

2. Դիզելային վառելիքի նշագիրը ներառում է որոշակի հաջորդականությամբ դասավորված՝ գծիկով միացված նշանների հետեւյալ խմբերը՝

2.1. Առաջին խումբ. ԴՎ (DT) տառերը, որոնք նշանակում են ավտոմոբիլային դիզելային շարժիչների համար նախատեսված դիզելային վառելիք,

2.2. Երկրորդ խումբ. Ա (Ո) (ամառային), Ձ (Յ) (ձմեռային), Ա (A) (արկտիկական), Ե (E) (միջսեզոնային) տառերը, որոնք նշանակում են օգտագործման կլիմայական պայմանները:

2.3. Երրորդ խումբ. K2, K3, K4, K5 պայմանանշանները, որոնք նշանակում են դիզելային վառելիքի էկոլոգիական դասը:

3. Մակնիշի նշագիրը կարող է ընդգրկել պատրաստողի առետրային նշանը (ապրանքային նշանը):

Հավելված 2

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրօին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

**Ավտոմոբիլային բենզինի բնութագրերին ներկայացվող պահանջները**

Ավտոմոբիլային բենզինի բնութագրերը	Չափման միավորը	Նորմերը՝ էկոլոգիական դասի համար			
		K2	K3	K4	K5
Ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	մգ/կգ	500	150	50	10
Բենզոլի ծավալային մասը, ոչ ավելի	%	5	1	1	1
Թթվածնի զանգվածային մասը, ոչ ավելի	%	չի որոշվում	2,7	2,7	2,7
Ածխաջրածինների ծավալային մասը, ոչ ավելի՝	%				
արոմատիկ		չի որոշվում	42	35	35
օլեֆինային		չի որոշվում	18	18	18
Օկտանային թիվը՝					
ըստ հետազոտական մեթոդի, ոչ պակաս		80	80	80	80
ըստ շարժիչային մեթոդի, ոչ պակաս		76	76	76	76
Հագեցած գոլորշիների ճնշումը՝	կՊա				
ամառային շրջանում		35 – 80	35 – 80	35 – 80	35 – 80
ձմեռային շրջանում		35 – 100	35 – 100	35 – 100	35 – 100
Երկաթի կոնցենտրացիան, ոչ ավելի	մգ/դմ <sup>3</sup>	բացակայում է	բացակայում է	բացակայում է	բացակայում է
Մանգանի կոնցենտրացիան, ոչ ավելի	մգ/դմ <sup>3</sup>	բացակայում է	բացակայում է	բացակայում է	բացակայում է
Կապարի կոնցենտրացիան*, ոչ ավելի	մգ/դմ <sup>3</sup>	5	5	5	5

Ավտոմոբիլային բենզինի բնութագրերը	Չափման միավորը	Նորմերը՝ էկոլոգիական դասի համար			
		K2	K3	K4	K5
Մոնոմեթիլանիլինի ծավալային մասը, ոչ ավելի	%	1,3	1,0	1,0	բացակայում է
Օքսիգենատների ծավալային մասը, ոչ ավելի՝	%				
մեթանոլի**		չի որոշվում	1	1	1
էթանոլի		չի որոշվում	5	5	5
իզոպրոպանոլի		չի որոշվում	10	10	10
տրետբութանոլի		չի որոշվում	7	7	7
իզոբութանոլի		չի որոշվում	10	10	10
մոլեկուլում ածխածնի 5 կամ ավելի ատոմ պարունակող եթերների		չի որոշվում	15	15	15
այլ օքսիգենատների (210°C-ից ոչ բարձր եռման ավարտի ջերմաստիճանով)		չի որոշվում	10	10	10
* Ռուսաստանի Դաշնության համար K2, K3, K4 եւ K5 էկոլոգիական դասերի դեպքում՝ բացակայում է					
** Ռուսաստանի Դաշնության համար K3, K4 եւ K5 էկոլոգիական դասերի դեպքում՝ բացակայում է					

Հավելված 3

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բեռնափոխակ, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրֆին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

**Դիզելային վառելիքի բնութագրերին ներկայացվող պահանջները**

Դիզելային վառելիքի բնութագրերը *	Չափման միավորը	Նորմերը՝ էկոլոգիական դասի համար			
		K2	K3	K4	K5
Ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	մգ/կգ	500	350	50	10
Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում, ոչ ցածր	°C				
ամառային եւ միջսեզոնային դիզելային վառելիքի համար		40	40	55	55
ձմեռային եւ արկտիկական դիզելային վառելիքի համար		30	30	30	30
Ֆրակցիոն կազմը՝ ծավալայինների 95 տոկոսը թորվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	360	360	360	360
Պոլիցիկլիկ արոմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը, ոչ ավելի	%	-	11	11	8
Ցետանային թիվը՝ ամառային դիզելային վառելիքի համար, ոչ պակաս	-	45	51	51	51
Ցետանային թիվը՝ ձմեռային եւ արկտիկական դիզելային վառելիքի համար, ոչ պակաս	-	չի որոշվում	47	47	47
Յուղման ունակությունը, ոչ ավելի	մկմ	չի որոշվում	460	460	460
Զտելիության սահմանային ջերմաստիճանը, ոչ բարձր	°C				

Դիզելային վառելիքի բնութագրերը *	Չափման միավորը	Նորմերը՝ էկոլոգիական դասի համար			
		K2	K3	K4	K5
ամառային դիզելային վառելիքի		չի որոշվում	չի որոշվում	չի որոշվում	չի որոշվում
ձմեռային դիզելային վառելիքի **		մինուս 20	մինուս 20	մինուս 20	մինուս 20
արկտիկական դիզելային վառելիքի		մինուս 38	մինուս 38	մինուս 38	մինուս 38
միջսեզոնային դիզելային վառելիքի ***		մինուս 15	մինուս 15	մինուս 15	մինուս 15
* դիզելային վառելիքում թույլատրվում է ճարպաթթուների մեթիլային եթերների պարունակությունը ոչ ավելի քան 7% (ըստ ծավալի)					
** Ղազախստանի Հանրապետության համար K2, K3, K4 եւ K5 էկոլոգիական դասերի դեպքում՝ ոչ ավելի, քան մինուս 15 °C					
*** Ղազախստանի Հանրապետության համար K2, K3, K4 եւ K5 էկոլոգիական դասերի դեպքում՝ ոչ ավելի, քան մինուս 5 °C					

Հավելված 4

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բեռնափոխակ, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրֆին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

**Մագուրֆի բնութագրերին ներկայացվող պահանջները**

Մագուրֆի բնութագրերը	Չափման միավորը	Նորմերը
Ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	3,5
Բռնկման ջերմաստիճանը բաց հալքանոթում, ոչ ցածր	°C	90
Ծծմբաջրածնի պարունակությունը, ոչ ավելի	ppm	10 *
<p>*նորման սահմանվում է 2017 թվականի հունվարի 1-ից Բելառուսի Հանրապետության եւ Ղազախստանի Հանրապետության տարածքներում, Ռուսաստանի Դաշնության տարածքում ծծմբաջրածնի պարունակությունը ոչ ավելի է, քան՝</p> <p style="text-align: right;">30 ppm մինչեւ 31.12.2012թ., 20 ppm մինչեւ 31.12.2014թ., 10 ppm՝ անսահմանափակ:</p>		

Հավելված 5

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրֆին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

**Ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի բնութագրերին ներկայացվող պահանջները**

Ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի բնութագրերը	Չափման միավորը	Նորմերը		
		թռիչքի մինչձայնային արագությամբ թռչող ապարատների համար		թռիչքի գերձայնային արագությամբ թռչող ապարատների համար
		Ջեթ Ա-1	SU-1	
Կինեմատիկ մածուցիկությունը մինուս 40°C ջերմաստիճանային պայմաններում, ոչ ավելի	մմ <sup>2</sup> /վ	-	8	16
Կինեմատիկ մածուցիկությունը մինուս 20°C ջերմաստիճանային պայմաններում, ոչ ավելի	մմ <sup>2</sup> /վ	8	-	-
Բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը, ոչ բարձր կամ	°C	-	մինուս 50	մինուս 50
սառչելու ջերմաստիճանը, ոչ բարձր	°C	մինուս 47	-	-
Մեխանիկական խառնուկների եւ ջրի պարունակությունը	-	բացակայում է	բացակայում է	բացակայում է
Ֆրակցիոն կազմը՝				
10 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	205	165	220
90 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	300	230	290
թորագտումից մնացորդը, ոչ ավելի	%	1,5	չի	չի նորմավոր-



			նորմավորվում	վում
թորագտումից կորուստները, ոչ ավելի	%	1,5	չի նորմավորվում	չի նորմավորվում
Չմրտող բոցի բարձրությունը*, ոչ պակաս	մմ	25	25	20
Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում, ոչ ցածր	°C	38	28	28
Արմատիկ ածխաջրածինների ծավալային մասը, ոչ ավելի	%	25	-	-
Արմատիկ ածխաջրածինների զանգվածային մասը, ոչ ավելի	%	-	22	22
Փաստացի խեժերի պարունակությունը, ոչ ավելի	մգ/100սմ <sup>3</sup>	7	7	7
Ընդհանուր ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	0,25	0,20	0,10
Մերկապտանային ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	0,003	0,003	0,001
Ջերմաթթվեցման կայունությունը ստուգիչ ջերմաստիճանային պայմաններում*, ոչ ցածր	°C	260	260	275
ճնշման անկումը ֆիլտրի վրա, ոչ ավելի	մմ սս	25	25	25
նստվածքների գույնը խողովակի վրա (ոչ բնորոշ նստվածքների բացակայության դեպքում), ոչ ավելի կամ	Միավորներն ըստ գունային սանդղակի	3	3	3
Ջերմաթթվեցման կայունությունը դինամիկ մեթոդով 150-180°C ջերմաստիճանային պայմաններում*				
ճնշման անկումը ֆիլտրի վրա 5 ժամվա ընթացքում, ոչ բարձր	կՊա	-	-	10
նստվածքները ջեռուցիչի վրա, ոչ ավելի	Միավորներ	-	-	2
Տեսակարար էլեկտրահաղորդականությունը*	պՍմ/մ			
առանց հակաստատիկ հավելանյութի, ոչ ավելի		10	10	10
հակաստատիկ հավելանյութով		50-600	50-600	50-600
* որոշվում է արտադրության նախապատրաստման փուլում եւ երաշխավորվում է պատրաստողի կողմից				

Ծանուցում: Ռուսաստանի ցուրտ եւ արկտիկական կլիմայական շրջաններում կիրառվող ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը պետք է լինի ոչ ավելի, քան մինուս 60°C:

## Հավելված 6

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրթին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

### Ավիացիոն բենզինի բնութագրերին ներկայացվող պահանջները

Ավիացիոն բենզինի բնութագրերը	Չափման միավորը	Նորմերը
Օկտանային թիվը՝ ըստ շարժիչային մեթոդի, ոչ պակաս	-	91
Տեսակայնությունը* (հարուստ խառնուրդ), ոչ պակաս	-	115
Բյուրեղացման սկզբի ջերմաստիճանը, ոչ բարձր	°C	մինուս 60
Մեխանիկական խառնուկների եւ ջրի պարունակությունը	-	բացակայում է
Հագեցած գոլորշիների ճնշումը	կՊա	29,3 - 49
Ֆրակցիոն կազմը՝		
10 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	82
50 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	105
90 տոկոսը թորահանվում է ջերմաստիճանային պայմաններում, ոչ բարձր	°C	170
թորագտումից մնացորդը, ոչ ավելի	%	1,5
թորագտումից կորուստները, ոչ ավելի	%	1,5
Փաստացի խեժերի պարունակությունը, ոչ ավելի	մգ/100 սմ <sup>3</sup>	3
Ընդհանուր ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	0,03
Գույնը	-	կանաչ

\* որոշվում է արտադրության նախապատրաստման փուլում եւ երաշխավորվում է պատրաստողի կողմից

Հավելված 7

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինին, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրֆին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

**Նավերի համար նախատեսված վառելիքի բնութագրերին ներկայացվող պահանջները**

Նավի վառելիքի բնութագրերը	Չափման միավորը	Նորմերը
Ծծմբի զանգվածային մասը, ոչ ավելի	%	3,5 (մինչեւ 2011թ. դեկտեմբերի 31-ը) 2 (մինչեւ 2012թ. դեկտեմբերի 31-ը) 1,5 (2013թ. հունվարի 1-ից) 0,5 (2020թ. հունվարի 1-ից)
Բռնկման ջերմաստիճանը փակ հալքանոթում, ոչ ցածր	°C	61

Հավելված 8

«Ավտոմոբիլային եւ ավիացիոն բեռնափոխակ, դիզելային եւ նավերի համար նախատեսված վառելիքին, ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքին եւ մագուրփին ներկայացվող պահանջների մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 013/2011)

**Վառելիքի համապատասխանության հայտարարագրման սխեմաները\***

Սխեմայի համարը	Սխեմայի տարրերը			Կիրառությունը	Համապատասխանությունը հաստատող փաստաթուղթ
	Արտադրանքի փորձարկումներ, տիպի հետազոտություն	Արտադրության գնահատում	Արտադրական հսկողություն		
2դ	Արտադրանքի խմբաքանակի փորձարկումն իրականացվում է փորձարկման լաբորատորիայում կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում)	-	-	Փորձարդյունաբերական խմբաքանակի համար  Հայտատու՝ Մաքսային միության անդամ պետության պատրաստող կամ Մաքսային միության տարածքում օտարերկրյա պատրաստողի կողմից լիազորված անձ	Արտադրանքի խմբաքանակի համապատասխանության հայտարարագիր
3դ	Վառելիքի նմուշների փորձարկում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում)	-	Արտադրական հսկողությունն իրականացնում է պատրաստողը	Սերիական թողարկման վառելիքի համար՝ հայտատու՝ ՄՄ անդամ պետության պատրաստող կամ պատրաստողի	Սերիական թողարկման վառելիքի համապատասխանության հայտարարագիր

				կողմից լիազորված անձ	
4դ	Վառելիքի խմբաքանակի փորձարկում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում)	-	-	Վառելիքի խմբաքանակի համար՝ ՄՄ անդամ պետության պատրաստող կամ պատրաստողի կողմից լիազորված անձ կամ ներմուծող	Վառելիքի խմբաքանակի համապատասխանության հայտարարագիր
6դ	Վառելիքի նմուշների փորձարկում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում)	Որակի կառավարման համակարգի հավաստագիր եւ կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմնի կողմից տեսչական հսկողություն	Արտադրական հսկողությունն իրականացնում է պատրաստողը	Սերիական թողարկման վառելիքի համար՝ ՄՄ անդամ պետության պատրաստող կամ պատրաստողի կողմից լիազորված անձ	<i>Սերիական թողարկման վառելիքի համապատասխանության հայտարարագիր</i>
<p>* Մաքսային միության հանձնաժողովի 2011 թվականի ապրիլի 7-ի թիվ 621 որոշմամբ հաստատված՝ «Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում համապատասխանության գնահատման (հաստատման) տիպային սխեմաների կիրառման կարգի մասին» հիմնադրույթի համաձայն:</p>					

**Վառելիքի համապատասխանության հայտարարագրման սխեմաների նկարագրությունը**

**1. Հայտարարագրման սխեմա 2դ**

1.1. 2դ սխեման ներառում է հետեւյալ ընթացակարգերը.

- տեխնիկական փաստաթղթերի ձեւավորում ու վերլուծություն,
- փորձարդյունաբերական խմբաքանակի փորձարկումների անցկացում,
- համապատասխանության հայտարարագրի ընդունում եւ գրանցում:

1.2. Հայտատուն ձեւավորում է տեխնիկական փաստաթղթերը եւ անցկացնում դրանց վերլուծություն:

1.3 Հայտատուն անցկացնում է արտադրանքի նմուշների փորձարկումներ՝ տեխնիկական կանոնակարգի պահանջներին արտադրանքի հայտագրված համապատասխանության հաստատումն ապահովելու համար: Արտադրանքի նմուշների փորձարկումներն անցկացվում են հայտատուի ընտրությամբ փորձարկման լաբորատորիայում կամ հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում):

1.4. Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության հայտարարագիրը:

## 2. **Հայտարարագրման սխեմա 3դ**

2.1. 3դ սխեման ներառում է հետեւյալ ընթացակարգերը.

- տեխնիկական փաստաթղթերի ձեւավորում ու վերլուծություն,
- արտադրական հսկողության իրականացում,
- վառելիքի նմուշների փորձարկումների անցկացում,
- համապատասխանության հայտարարագրի ընդունում եւ գրանցում:

2.2. Հայտատուն ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի արտադրության պրոցեսը լինի կայուն եւ ապահովի արտադրվող վառելիքի համապատասխանությունը ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին, ձեւավորում է տեխնիկական փաստաթղթերը եւ անցկացնում դրանց վերլուծությունը:



2.3. Հայտատուն ապահովում է արտադրական հսկողության իրականացումը:

2.4. ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքի համապատասխանության հսկողության նպատակով հայտատուն անցկացնում է վառելիքի նմուշների փորձարկումներ: Վառելիքի նմուշների փորձարկումն անցկացվում հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում):

2.5. Հայտատուն ձեակերպում է համապատասխանության հայտարարագիրը:

### 3. **Հայտարարագրման սխեմա 4դ**

3.1. 4դ սխեման ներառում է հետևյալ ընթացակարգերը.

- տեխնիկական փաստաթղթերի ձեավորում ու վերլուծություն,
- վառելիքի խմբաքանակի փորձարկումների անցկացում,
- համապատասխանության հայտարարագրի ընդունում եւ գրանցում:

3.2. Հայտատուն ձեավորում է տեխնիկական փաստաթղթերը եւ անցկանցում դրանց վերլուծությունը:

3.3. Հայտատուն անցկացնում է վառելիքի նմուշների փորձարկում՝ ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին վառելիքի հայտագրված համապատասխանության հաստատումն ապահովելու համար: Վառելիքի նմուշների փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում):

3.4. Հայտատուն ձեակերպում է համապատասխանության հայտարարագիրը:

### 4. **Հայտարարագրման սխեմա 6դ**

4.1. 6դ հայտարարագրման սխեման ներառում է հետևյալ

ընթացակարգերը.

- տեխնիկական փաստաթղթերի ձեւավորում ու վերլուծություն, որոնց կազմի մեջ պարտադիր կարգով ներառվում է կառավարման համակարգի սերտիֆիկացման մարմնի կողմից տրված կառավարման համակարգի հավաստագրի պատճենը (հավաստագրի պատճենը),

- տեխնիկական փաստաթղթերի ձեւավորում ու վերլուծություն, որոնց կազմի մեջ պարտադիր կարգով ներառվում է կառավարման համակարգի հավաստագրի պատճենը,

- արտադրական հսկողության իրականացում,
- վառելիքի նմուշների փորձարկումների անցկացում,
- համապատասխանության հայտարարագրի ընդունում եւ գրանցում,
- կառավարման համակարգի գործունեության կայունության հսկողություն:

4.2. Պատրաստողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները, որ արտադրության պրոցեսով եւ կառավարման համակարգի կայուն գործունեությամբ ապահովվի արտադրանքի համապատասխանությունը ՄՄ տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

4.3. Պատրաստողն ապահովում է արտադրական հսկողության իրականացումը եւ կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմին տեղեկացնում կառավարման համակարգում նախատեսվող բոլոր փոփոխությունների մասին:

4.4. Պատրաստողն իրականացնում է վառելիքի նմուշների փորձարկում: Վառելիքի նմուշների փորձարկումներն անցկացվում են հավատարմագրված փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում):

4.5. Հայտատուն ձեւակերպում է համապատասխանության հայտարարագիրը:

4.6. Կառավարման համակարգերի սերտիֆիկացման մարմինն իրականացնում է սերտիֆիկացված կառավարման համակարգի գործունեության տեսչական հսկողություն:

Տեսչական հսկողության բացասական արդյունքների դեպքում հայտատուն կայացնում է հետեւյալ որոշումներից մեկը.

- կասեցնել համապատասխանության հայտարարագրի գործողությունը,
- չեղարկել համապատասխանության հայտարարագրի գործողությունը:

Միասնական ձեռով ձեւակերպված՝ տրված համապատասխանության սերտիֆիկատների եւ գրանցված համապատասխանության հայտարարագրերի միասնական ռեեստրում հայտատուի կողմից կատարվում է համապատասխան գրառում:

#### 5. **Տեխնիկական փաստաթղթերի պահպանումը**

Մաքսային միության միասնական մաքսային տարածքում պետք է պահպանվի փաստաթղթերի փաթեթ՝

- սերիական թողարկման ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինի, դիզելային, նավերի համար նախատեսված վառելիքի եւ ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի, մագուրի վերաբերյալ պատրաստողի կամ պատրաստողի կողմից լիազորված անձի մոտ՝ նշված ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինը, դիզելային, նավերի համար նախատեսված վառելիքը եւ ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքը, մագուրը արտադրությունից հանելու (դրանց արտադրությունը դադարեցնելու) օրվանից առնվազն 10 տարի,

- ավտոմոբիլային եւ ավիացիոն բենզինի, դիզելային, նավերի համար նախատեսված վառելիքի եւ ռեակտիվ շարժիչների համար նախատեսված վառելիքի, մագուրի խմբաքանակի վերաբերյալ ներմուծողի մոտ՝ տվյալ խմբաքանակի իրացման օրվանից առնվազն 10 տարի:

Փաստաթղթերի փաթեթը պետք է պետական վերահսկողության մարմիններ ներկայացվի նրանց պահանջով: